

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՅԱՎԱԿՑԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ՋՈՐՋ ԲՈՒՇԻՆ՝ ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՅՈՒՄ
ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՂԵՏԱԼԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԱՌԹԻՎ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀ
ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ
ՏԻԱՐ ՋՈՐՋ ԲՈՒՇԻՆ

Վաշինգտոն

Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու և Հայաստանի ժողովրդի ներկայացնում ենք Ձեզ խորին վշտակցություն Սան Ֆրանցիսկոյում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի դժբախտ առիթով և աղոթում զոհյալ բնակիչների հոգիների հանգստյան համար:

Այս սուգի պահին թույլ տվեք մի անգամ ևս Մեր երախտագիտությունը հայտնել անձամբ Ձեր, Ձեր բարեպաշտ որդու և ամերիկյան ժողովրդի մարդասիրական վերաբերմունքի համար՝ անցյալ դեկտեմբերին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի օրերին:

Առաջիկա կիրակի օր, 22 հոկտեմբերին, Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում պիտի կատարենք հոգեհանգստյան պատարագ և արարողություն Սան Ֆրանցիսկոյի զոհվածների հիշատակին:

Խորին հարգանոք և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
19 հոկտեմբերի 1989 թ.